ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/250

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17549-2020 գրությամբ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության 24.11.2020թ. թիվ 3/27/51403-20 գրության հիման վրա 30.11.2020թ. թիվ 26/26-1/17549-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/250 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 09:50-ին և 14.12.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.11.2020թ. թիվ 3/27/51403-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ձեռնարկել միջոցներ Ընկերությանն Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/250 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 09:50-ին և 14.12.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/250 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/250 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը՝ տվյալ դեպքում «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն, ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունը պետք է իրականացվի Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց, Պատվիրատուի մոտ պահանջը առաջանալուց 21 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:

4. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 25.04.2020թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը:

5. Համաձայնագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

6. «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 23.05.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցելով Ձեր կողմից հայտարարված (ծածկագիր՝ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2) police.am կայքի սպասարկման մրցույթին և առաջարկելով նվազագույն գին հաղթել է:

Մինչ այժմ կատարել ենք ամբողջական կայքի թեսթավորում, որի հետևանքով ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որոնք ուղղելու համար դիմում ենք Ձեզ, որ մեզ տրամադրեք կայքի ադմինիստրատիվ վահանակ մուտք գործելու համար տվյալներ, ինչպես նաև սերվերի տվյալների բազայի և ֆայլերի մուտք գործելու համար մուտքի տվյալներ, եթե սերվերը պաշտպանված է IP մակարդակով, ապա կարող ենք մեր IP-ները ավելացնել (80.86.229.49, 80.86.229.50, 80.86.229.51)»:

7. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 15.06.2020թ. թիվ 25/24/23324-20 գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Ի պատասխան Ձեր 23.05.2020թ. դիմումի՝ հասցեագրված ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանին, հայտնում եմ, որ police.am կայքի տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարման համար հասանելիությունը տրամադրվում է ՀՀ ԱԱԾ կողմից, վերջինիս կողմից սահմանված

ընթացակարգերի համաձայն: Ձեր կոնտակտային տվյալները փոխանցվել են ՀՀ ԱԱԾ համապատասխան ստորաբաժանմանը, որի մասնագետները կապ կհաստատեն Ձեզ հետ մոտ օրերս:

Միևնույն ժամանակ խնդրում եմ ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 պայմանագրի շրջանակներում կատարել ներքոնշյալ աշխատանքները՝

- Ուղիղ միացումների սպասարկում,
- Ծրագրի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների (Linux, MySQL, Nginx, PHP, Apache) թարմացումների տեղադրում,
- Դիտարկիչների համատեղություն (IOS/Android համակարգերում կայքի թեստավորում),
- Արագագործության համար կայքի BackEnd մասի օպտիմալացում՝ եթե կա դրա անհրաժեշտությունը,
- Արագագործության համար կայքի HTML, JS, CSS մասի օպտիմալացում»:

8. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 17.08.2020թ. թիվ 24/109 գրությամբ հայտնել է հետևյալը՝

«ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 պայմանագրի շրջանակներում police.am կայքի տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ անհրաժեշտ է կատարել տեխնիկական բնութագրում նշված աշխատանքներ:

Միևնույն ժամանակ Ձեր 23.05.2020թ. դիմումը հասցեագրված ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանին, ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կողմից 15.06.2020թ. թիվ 25/24/23324-20 գրությամբ հայտնվել էր, որ հասանելիություն տրամադրում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, որից հետո 27.07.2020թ. էլեկտրոնային փոստով Ձեզ տեղեկացվել է, որ կայքի գաղտնաբառը անհրաժեշտ է ծրարով ստանալ ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունից: Չնայած ՀՀ ԱԱԾ-ի կողմից հասնելիության տրամադրմանը, մինչ օրս դուք կապի չեք եկել գաղտնաբառը ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ եռօրյա ժամկետում տրամադրել կոնտակտային տվյալներ և կապ հաստատել ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական վարչության աշխատակիցների հետ»:

9.«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 19.11.2020թ. թիվ 27/1146 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից»:

10. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 19.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17549-2020 գրությունը, ՀՀ ոստիկանության 24.11.2020թ. թիվ 3/27/51403-20 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը՝ տվյալ դեպքում «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն, ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունը պետք է իրականացվի Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց, Պատվիրատուի մոտ պահանջը առաջանալուց 21 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 25.04.2020թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը:

Համաձայնագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմեր փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 23.05.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցելով Ձեր կողմից հայտարարված (ծածկագիր՝ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2) police.am կայքի սպասարկման մրցույթին և առաջարկելով նվազագույն գին հաղթել է:

Մինչ այժմ կատարել ենք ամբողջական կայքի թեսթավորում, որի հետևանքով ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որոնք ուղղելու համար դիմում ենք Ձեզ, որ մեզ տրամադրեք կայքի ադմինիստրատիվ վահանակ մուտք գործելու համար տվյալներ, ինչպես նաև սերվերի տվյալների բազայի և ֆայլերի մուտք գործելու համար մուտքի տվյալներ, եթե սերվերը պաշտպանված է IP մակարդակով, ապա կարող ենք մեր IP-ները ավելացնել (80.86.229.49, 80.86.229.50, 80.86.229.51)»:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 15.06.2020թ. թիվ 25/24/23324-20 գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Ի պատասխան Ձեր 23.05.2020թ. դիմումի՝ հասցեագրված ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանին, հայտնում եմ, որ police.am կայքի տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարման համար հասանելիությունը տրամադրվում է ՀՀ ԱԱԾ կողմից, վերջինիս կողմից ահմանված ընթացակարգերի համաձայն: Ձեր կոնտակտային տվյալները փոխանցվել են ՀՀ ԱԱԾ համապատասխան ստորաբաժանմանը, որի մասնագետները կապ կհաստատեն Ձեզ հետ մոտ օրերս:

Միևնույն ժամանակ խնդրում եմ ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 պայմանագրի շրջանակներում կատարել ներքոնշյալ աշխատանքները՝

- Ուղիղ միացումների սպասարկում,
- Ծրագրի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների (Linux, MySQL, Nginx, PHP, Apache) թարմացումների տեղադրում,
- Դիտարկիչների համատեղություն (IOS/Android համակարգերում կայքի թեստավորում),
- Արագագործության համար կայքի BackEnd մասի օպտիմալացում՝ եթե կա դրա անհրաժեշտությունը,
- Արագագործության համար կայքի HTML, JS, CSS մասի օպտիմալացում»:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 17.08.2020թ. թիվ 24/109 գրությամբ հայտնել է հետևյալը՝

«ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 պայմանագրի շրջանակներում police.am կայքի տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարման վերաբերյալ անհրաժեշտ է կատարել տեխնիկական բնութագրում նշված աշխատանքներ:

Միևնույն ժամանակ Ձեր 23.05.2020թ. դիմումը՝ հասցեագրված ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանին, ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կողմից 15.06.2020թ. թիվ 25/24/23324-20 գրությամբ հայտնվել էր, որ հասանելիություն տրամադրում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, որից հետո 27.07.2020թ. էլեկտրոնային փոստով Ձեզ տեղեկացվել է, որ կայքի գաղտնաբառը անհրաժեշտ է ծրարով ստանալ ՀՀ

ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունից: Չնայած ՀՀ ԱԱԾ-ի կողմից հասնելիության տրամադրմանը, մինչ օրս դուք կապի չեք եկել գաղտնաբառը ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ եռօրյա ժամկետում տրամադրել կոնտակտային տվյալներ և կապ հաստատել ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական վարչության աշխատակիցների հետ»:

«Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 19.11.2020թ. թիվ 27/1146 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև 27.12.2019թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 19.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) ***<u>խախտվել է ծառայության մատուցման ժամկետը</u>:***

Պայմանագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև ***<u>25.04.2020թ.</u>*** կնքված Համաձայնագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետով սահմանվել է, որ ***<u>Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմեր փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:</u>***

Այսպիսով՝ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ն իր և ՀՀ ոստիկանության միջև 27.12.2019թ. կնքված Պայմանագրով ստանձնել է ***<u>Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց (25.04.2020թ.), Պատվիրատուի մոտ պահանջը առաջանալուց</u>*** ***<u>21 օրվա ընթացքում</u>***, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ. տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ***<u>ծառայությունը ՀՀ ոստիկանությանը մատուցելու պարտականությունն:</u>*** Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ Պատվիրատուն ծառայության մատուցման պահանջ է ներկայացրել 15.06.2020թ., մինչդեռ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 19.11.2020թ., չի մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունը՝ խախտելով ծառայության մատուցման ժամկետը, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17549-2020 գրությամբ «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մաքսիմիլիան Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**